

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

2364

Հայկազուհի քաղաքի խորհուրդ, միացիկ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ

Ջ  
Տ  
ՈՒ  
Մ  
Ն

Ս Կ Ս Կ Ե Ց

18805

ԿՈՒՍԱԿՑ  
1933 ՅԵՐԵՎԱՆ




31471-13

Հ. Կ. (Բ) Կ. ՅԵՐԿՈՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅԱՆ ԶՏՈՒՄՆ  
Ս Կ Ս Վ Ե Ց

ԽՐԱԿՐԵՑ Ը. Վ.




ԿՈՒՍԿՐԱՑ  
1933 ՅԵՐԵՎԱՆ

18805-50981

A II 41595





ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՇԱՐՔԵՐԻ ԶՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄ.  
Կ(Բ)Կ ԿԿ-Ի ՅԵՎ ԿՎԶ-Ի ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՍԱՅԱԿԱ-  
ՆԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Առաջարկել կուսակցության բոլոր քաղկոմներին և շրջկոմներին հերթական միասնական կուսորում (մայիսի 27-ին) անկուսակցական աշխատավորների լայն մասսաների մասնակցությամբ քննարկել Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի փորձումները կուսակցության ղեկավարական մասին, խնամքով նախապատրաստելով միասնական կուսորը (գեկուցողների ընտրությամբ, հրահանգում, ազդարարությամբ, հարվածայիններ հրավիրելը և այլն)։

2. Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին՝ բոլոր կուսկազմակերպություններին առաջիկա կուսգումար նախապատրաստելու հարցով կուսխմբակների ու ցեխային ըջիջների միջոցով ստուգել կոմունիստների (կուսակցության անդամների և թեկնածուների) ավանդարդային դերն արտադրության մեջ (քաղաքում և գյուղում), ամփոփելով կատարված աշխատանքի արդյունքները հունիսի 1-ին, իրրե նախնական նյութ զտման համար։

3. Հանձնարարել ԿԿ-ի կուլտպրոպագանդին մինչև հունիսի 1-ը վերջացնել աշխան-ձմեռային քաղուսուցման ստուգումը։

4. Առաջարկել բոլոր քաղկոմներին և շրջկոմներին ավարտել կոմունիստների կադմի ստուգումը հաշվեքարտերի հետ համեմատելով և շրջանային ՎՀ-ների հետ միասին մինչև հունիսի 1-ը հաշվեքարտերի մեջ գրանցել շրջանային ու կենտրոնական կուսորդանների կողմից դրված կուսառւյժները։

ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի քարտուղար՝ ԽԱՆԶՅԱՆ

## ՀԿ(Բ)Կ ԿԿ-Ի ԲՅՈՒՐՈՅԻ ՅԵՎ ԿՎԸ-Ի ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՈՒՄԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հսելով ԿԿ-ի կազմհրահանգչական բաժնի հաղորդումը կուսակցության գտման վերաբերյալ Համ.Կ(Բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի վորոշումների մասսայականացմանը նվիրված մայիսի 27-ի միասնական կուսորվա արդյունքների մասին, ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի բյուրոն և ԿՎՀ-ի նախագահությունը նշում են.

ա) մանրագնին նախապատրաստելով կուսորը, Յերեվանի, Լենինականի քաղկոմները, Ղափանի և այլ շրջկոմները հիմնականում կարողացել են մայիսի 27-ի կուսորը դարձնել կուսակցության առաջիկա գտման նախապատրաստական աշխատանքների ծավալման միջոց: Ապահովելով Համ.Կ(Բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի կուսակցության գտման վերաբերյալ վորոշումների նախնական մշակումն ու մասսայականացումը կուսակցական և անկուսակցական լայն մասսաների մեջ և գտման խնդիրները շաղկապելով արտադրական պլանների կատարման կոնկրետ հարցերի հետ, այդ շրջանների մի շարք բլիշները բայլեիկյան ինքնաքննադատություն ծավալեցին բլիշների աշխատանքում յեղած թերությունները հայտնաբերելու և վերացնելու ուղղությամբ, աշխատանքային խանդավառության նոր ալիք բարձրացրին և ձեռք բերին պլանների կատարման բարձր ցուցանիշներ, աբտադրության մեջ կոմունիստների ավանգարդային դերն ուժեղացնելու և կուսակցականների գաղափարական մակարդակը բարձրացնելու միջոցով.

բ) դրան զուգընթաց մի շարք շրջաններում (Թալին, Վեդի, Բասարգեչար, Մարտունի), ինչպես և Յերևանի (մարմարի գործարան, քաղկոռ, խորհրդային հիմնարկներ) ու

Լենինականի մի շարք բՆԻՇներում կուսորեն անցավ անբավարար կազմակերպվածությամբ: Շրջկոմները և բՆԻՇները թույլ նախապատրաստեցին կուսորը: Քննարկվող հարցերին վերաբերող նյութերը նախորդ փուլում, իսկ մշակվելու գեղքում չհաղկապվեցին այդ կազմակերպությունների կոնկրետ խնդիրներին հետևելով բոլոր բՆԻՇներն ապահովվեցին կուսակցական կայուն գեղուցողներով, իսկ Թալինի շրջանում գեղուցողներ ընտրելու գործն ինքնահոսք թողնվեց, մյուս հետևանքով Ձիթյանկով գյուղում գեղուցողն անկուսակցական գուրս յեկավ: Կուսորվա վատ նախապատրաստման հետևանքով, այդ կազմակերպությունների մի շարք բՆԻՇներում ժողովներն անցան առանց բանավարների և կոլանտեսականների անկուսակցական մասսայի պատշաճ մասնակցությամբ, ինքնաքննադատությունը թույլ ծավալվեց, իսկ մի շարք բՆԻՇներում կուսորը փաստորեն տապալվեց: Յեղնելով սրանից, ինչպես և կուսակցությունը դամանը նախապատրաստվելու աշխատանքներն ավելի լայն ծավալելու նպատակով, ՀԿ(բ)ԿԿ-ի բյուրոն և ԿՎՀ-ի նախագահությունը վերադարձնեց:

1. Առաջարկել բոլոր քաղկոմներին, շրջկոմներին, ՄՏԿ-ներին ու խորհրդակցությունների քաղաքականներին ծավալել աշխատանքը կուսակցության դաման վերաբերյալ Համ.Կ(բ)ԿԿ ԿԿ-ի և ԿՎՀ-ի 1933 թ. ապրիլի 28-ի վերադարձների և Համ.Կ(բ)Կ ՀԿՀ-ի հրահանգի հետագա մասսայական նացման ուղղությամբ, յուրաքանչյուր կուսակցական և անկուսակցական բանվորի ու կոլանտեսականի գիտակցությունը հասցնելով կուսակցության շարքերի դաման բացառիկ քաղաքական կարևոր նշանակությունը:

2. Պարտավորեցնել բոլոր շրջկոմներին և բՆԻՇներին կազմակերպել սխտեմաբիկ խմբական ու անհատական ագիտացիա, դրույցներ, հարց ու պատասխաններ դաման շուրջը, ԿԿ-ի և ԿՎՀ-ի վերադարձների, ինչպես նաև առաջավոր կազմակերպությունների դաման ընթացքին վերաբերող նյութերի ընթերցանություն ձևնարկությունների և կոլանտեսությունների բոլոր ողակներում, կազմակերպել հատուկ քաղաքներ կուսակցության դաման հարցերի շուրջը,



բոլոր կուսակցականներին ակտիվ աշխատանքի ներգրավելով զտման նախապատրաստման ասպարեզում:

3. Առաջարկել քաղկոմներին, շրջկոմներին, ՄՏԿ-ներին ու խորհրտեսուլթյունների քաղբաժիններին և բոլոր բլիշներին կազմակերպել յուրաքանչյուր կուսակցականի և ամբողջ բլիշի աշխատանքը բնորոշող նյութերի կենտրոնացումն ու սխտեմավորումը: Անցկացնել անդամավճարների մուծման, կուսժողովների հաճախման, կուսակցական պարտավորությունների կատարման ինքնաստուգում, բլիշների և կուսխմբակների ժողովներում դնել առանձին կոմունիստների զեկուցումները կուսպարտավորությունների, բլիշի առանձին հանձնարարությունների կատարման, ինչպես և արտադրության մեջ նրանց կատարած աշխատանքի մասին:

4. Առաջարկել ԿԿ-ի կուլտպրոպագոսին և շրջկոմներին միջոցներ ձեռք առնել բարելավելու կուսդաստիարակչական աշխատանքը, քննարկման յենթարկել Համ. Կ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի վորոշումները կուսլուսավորության ցանցում, կազմակերպել Կոմիտեերնի և Համ. Կ(բ)Կ-ի ծրագրի ու կանոնադրության, կուսակցության պատմության, նրա զարգացման հիմնական ետպաների, ընթացիկ քաղաքականության հանգուցային հարցերի ուսումնասիրության խմբակներ և դասընթացներ. այդ խմբակներում ընդգրկել բաժարար քաղպատրաստականություն չունեցող բոլոր կուսակցականներին, հատուկ ուշադրություն դարձնելով կուսակցության թեկնածուների վրա, այն հաշվով, վոր մինչև զտումը զգալիորեն բարձրացվի նրանց պատրաստականության մակարդակը:

5. Պարտավորեցնել ԿԿ-ի կազմհրահանգչական բաժնին, ԿԿ-ի կուլտպրոպագոսին և Յերկոմի կազմհրահանգչական բաժնի հետ միասին հինգ որվա ընթացքում կազմակերպել զտման վերաբերյալ նյութերի հատուկ ժողովածուի հրատարակումը հայերեն ու թուրքերեն լեզուներով և ուղարկել շրջկոմներին՝ բլիշների ու կուսխմբակների համար, մինչև հուլիսի մեկը:

6. Նշելով մամուլի անբավարար աշխատանքը կուսակցության զտման նախապատրաստման ուղղությամբ, առաջարկել ԿԿ-ի կուլտպրոպ ու ագիտմասսայական բաժիններ

բին և շրջկոմիտեներին, ինչպես և հանրապետական, շրջանային, գործարանային, խորհրդատեսային ու կոլտնտեսային թերթերի, բաղձատիրած ու պատի թերթերի խմբագրություններին լայնորեն լուսարանել մամուլում կուսակցության շարքերի գտման նախապատրաստման ընթացքը, ինչպես և առաջավոր կազմակերպությունների գտման ընթացքն ու փորձը:

7. Նշելով քաղաքային կուսկազմակերպությունների անբավարար աշխատանքը կուսակցության գտման նախապատրաստման ուղղությամբ դյուզական կուսկազմակերպություններին ողնություն ցույց տալու գործում, առաջարկել Երևանի և Լենինականի քաղկոմներին և արդյունաբերական ձեռնարկությունների բջիջներին ամենամոտ ժամանակում հատուկ ուշադրություն դարձնել կուսակցության գտման նախապատրաստման ուղղությամբ դյուզական բջիջներին սղնելու գործին, փոխադրել քաղաքային կուսկազմակերպությունների աշխատանքի փորձը, հետևել, փոր լայնորեն ծավալվի կուսակցության գտման նախապատրաստումը յենթաշեֆ դյուզբջիջներում:

8. Պարտավորեցնել քաղկոմներին, շրջկոմներին և բջիջներին՝ վերջացնել կոմունիստների հաշվառման քարտերի կարգավորման աշխատանքը, ճշտել կազմակերպության կազմի հաշվառումը՝ ըստ քարտերի, համեմատելով նրա փաստական կազմի հետ, ստուգել քարտերի լրացման ճշտությունը, այդ քարտերում գրանցելով 1929 թվի գտումից հետո կուսակցականներին տրված բոլոր կուստույժերը:

9. Առաջարկել բոլոր շրջանային ՎՀ-ներին՝ արագացնել կուսակցության անդամների և թեկնածուների վրա յեղած նյութերի քննությունը, ինչպես և ժամանակին քննել նոր ստացվող գործերը: Դրա հետ միաժամ ստուգել կոմունիստների վրա դատական-հետաքննական որդաններում յեղած բոլոր գործերը, միջոցներ ձեռք առնել արագացնելու նրանց քննությունը, իսկ դատական որդանների վճռից հետո անմիջապես քննել նրանց՝ կուսակցության շարքերում մտալու հարցը:

10. Բացառիկ նշանակություն տալով ստուգող հանձնաժողովների անդամների ընտրությանը, հանձնարարել ԿԿ-ի և ԿՎՀ-ի կազմհրահանգչական բաժիններին կուսկոլեգիայի



հետ միասին ստուգող հանձնաժողովների կազմի համար նախատեսել ամենակայուն, նվիրված կուսակցականներին, համաձայն Համ. Կ(բ) ԿԿ-ի և ԿՎՀ-ի վորդուկների:

11. Հուլիսի կեսերին հրավիրել ԿՎՀ-ի պլենում շրջանային ՎՀ-ների մասնակցությամբ, ուր քննության առնել կուսակցության զտման նախապատրաստման ընթացքը: Մինչև հուլիսի 10-ը բոլոր շրջաններում հրավիրել շրջանային ՎՀ-ների միորյա լայն պլենումներ նույն որակարգով:

12. ԿԿ-ի բյուրոն և ԿՎՀ-ի նախագահությունը պարտավորեցնում են բոլոր քաղկոմներին, շրջկոմներին, ՄՏԿ-ների ու խորհրտեսությունների քաղբաժիններին և բլիջներին՝ կուսակցության զտումը նախապատրաստելու ամբողջ աշխատանքն անցկացնել նշանաբան ունենալով՝ բարձրացնել կուսկազմակերպության բոլոր ողակների զգաստությունը՝ խորթ, խցկված ու վերասերված տարբերի, յերկերեսանիների, ոպորտունիստների, կուսակցության յերկաթյա կարգապահությունը խախտողների, կարիերիստների և մորթապաշտների, բյուրոկրատացած ու բարոյապես քայքայված տարրերի դեմ մղվող պայքարում, կուսակցությունը նրանցից մաքրելու համար, Հայաստանի կուսկազմակերպությունն ել ավելի ամրացնելու համար, նրա բոլոր ողակների մարտունակության հետագա բարձրացման համար:

Կուսակցության զտման նախապատրաստումը պետք է ել ավելի սերտորեն համախմբի կուսակցության շուրջը բանվորական ու կոլտնտեսական մասսաներին և ավելի բարձր աստիճանի վրա դնի Հայաստանի կուսկազմակերպության ամբողջ աշխատանքը:

## ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՁՏՈՒՄՆ ՍԿՍՎԵՑ

Մոսկովայի և Լենինգրադի մարզերում հանձնաժողովներն սկսում են կուսակցական բջիջների գտումը: Մոսորերս սկսվելու յե բջիջների գտումը Ուրալի, Դոնեցի, Ուդեսսայի, Կիևի ու Վիսնիցայի մարզերում, Հեռավոր արևելյան ու Արևելյան Սիբիրի յերկրներում և Բելոռուսիայում:

Խնչպեա պետք եր սպասել, գտումը հսկայական հետաքրքրություն առաջացրեց յերկրում և սահմաններից դուրս: Արտասահմանի բուրժուական և սպիտակ-զվարդիական մամուլն «ողտվում և հանգամանքից», վորպեսզի մի ավելորդ անգամ չարախինդ եջեր նվիրի Խորհրդային Միությանը և մեր կուսակցությանը, կրկին ու կրկին անխուսափելի... կործանում նախագուշակելով նրան: «Համ. Կ(բ)Կ-ի գտումն առաջ և յեկել «արտակարգ», «հատուկ» հանգամանքներից»... «Համ. Կ(բ)Կ ցած և զլորվում»... — կոկորդ ճեղքելով ազադակում են այժմ սպիտակ-զվարդիական թափթբփուկները: Վորքան հին, վորքան ծիծաղելի յե այդ բուրբը:

Այն բացատրիվ վողեորությունը, վորով պատասխանեցին կուսակցական և անկուսակցական մասսաները Կենտկոմի ու ԿՎՀ-ի՝ դաման վերաբերյալ վորոշմանը, մեկ անգամ ես վկայում և մեր կուսակցության հզորության մասին: «Կուսակցությունն ի բ շարք եր ի գտման հարցն և դնում վոչ թե այն պատճառով, վոր նա թույլ և, այլ այն պատճառով, վոր նա ամբա-կուս և և ուժ եղ» (ԿԱԳԱՆՈՒԼԻԶ):

Կուսակցության գտումը հանդիսանում և կուսակցական ինքնաքննադատության բարձրագույն ձևը: Աշխարհումս վոչ մի կուսակցություն ի վիճակի չէ դիմանալու այդ ինքնաքննադատությանը: Թող փորձեն, ասենք, սոցիալ-

Ֆաշիստական կուսակցություններն զբաղվել իրենց շարքերի բացահայտ գտնամբ այն միլիոնավոր պրոլետարներին առաջ, վորոնց դաժանորեն խարում, դավաճանում են այդ կուսակցությունները հոգուտ բուրժուազիայի շահերի—և մենք ակնառու կերպով կհամոզվենք, թե վորքան կորստաբեր կլինի նրանց համար այդպիսի ինքնաքննադատությունը: Միմիայն մեր կուսակցությունը շահագործման լծից ազատ, զաղութային ստրկությունից, ազգային անհատաբարությունից ազատ, նոր հասարակակարգի հաղթանակի կուսակցությունը՝ կարող ե թույլ տալ իրեն ինքնաքննադատության այնպիսի մի ձև, ինչպիսին ե բացահայտ գտումը:

Բլիշների գտնմից առաջ տեղերում կատարվում ե լայն մասսայական-բացատրական աշխատանք և խնամկոտ կազմակերպչական նախապատրաստում: Զտման հարցերը հիմնավորապես քննվում են կուսակցական ակտիվում, կուսակցական դռնփակ ժողովներում, բլիշների ժողովներում՝ մասնակցությամբ անկուսակցական բանվորների և կուլանտեսական մասսաների ճնշող մեծամասնության: Չափազանց բնորոշ ե այն փաստը, վոր Կենտկոմի ու ԿՎՀ-ի գտմանը վերաբերյալ վորոշման քննարկումը մեծ հետաքրքրություն ե առաջացնում մասսաներում բայրելիզմի կազմակերպական սկզբունքների, կուսակցության պատմության, Զ-րդ հնգամյակում կուսակցության կատարելիք դերի ու խնդիրների նկատմամբ: Դա վոչ այլ ինչ ե, յեթե վոչ բայլը ե վիկյան կուսակցականության հաղթանակի ցայտուն արտահայտությունը:

Բայրելիկյան կուսակցության գաղափարներն աշխատավոր մասսաների նորանոր խավեր են նվաճում քաղաքում ու գյուղում: Առավել ևս աններելի յե միքանի կուսակցական կազմակերպությունների անշարժությունը մասսաներին գտման նպատակներն ու խնդիրները բացատրելու գործում: Կան բլիշներ, որինակ՝ Ուրալի մի շարք շրջաններում (և վոչ միայն Ուրալի), վորոնք իրենց բացառական աշխատանքը կատարված, ավարտված են համարում, որինակ, դռնբաց ժողովը գումարելուց հետո: Իհարկե, կուսակցության դռնբաց ժողովը հանդիսանում ե պրոպագանդի

ու բացատրական աշխատանքի լավագույն ձևերից մեկը, սակայն սահմանափակվել դրանով չի կարելի: Պետք և միջոցներ ձեռք առնել (կուսակուսավորության ցանցի, հատուկ խմբակների և մանավանդ տեղական մամուլի միջոցով), վոր մասսաները խորապես յուրացնեն կուսակցության դերն ու նշանակությունը ներկա պայմաններում և կուսակցության շարքերը պարբերաբար դաման յենթարկելու անհրաժեշտությունը, յուրացնեն ներկա դաման խնդիրները:

Պետք և հիշել, վոր վերջին տարիներս կուսակցությունն զգալիորեն աճել և, վոր այդ առնչությամբ հսկայական թվով կոմունիստներ առաջին անգամ են յենթարկվելու դաման: Նախ և առաջ կուսակցության այդ խավը կարիք ունի աշխատանք կատարելու իր վրա: Կուսակցությանը նվիրված յերիտասարդ կոմունիստների մեջ քիչ չեն այնպիսիները, վորոնք բավականաչափ չեն ըմբռնել դաման իմաստն ու նպատակը: Այդպիսի կոմունիստներին պետք և բացատրել դաման սմբողջ հսկայական նշանակությունը:

«Կուսակցության շարքերի գտումը նույնպիսի անհրաժեշտ մի պրոցես և, ինչպես առողջ որդանիզմը վատառողջ տարրերից մաքրելու պրոցեսը» (ԿԱԳԱՆՈՎԻԶ):

Զուումը կազատի կուսակցությունն այն անձերից, վորոնք խանդարում են նրա հետադա դարգացմանը: Դրա հետ միասին, գտումն էլ ավելի կկոփի կուսակցության առողջ որդանիզմը:

Հազարապատիկ իրավացի յև Մոսկվայի «Տրյոխգորնայա մանուֆակտուրա»-յի բանվորուհի յերիտասարդ կոմունիստ Կոննովան. «Զուումը պատվի զործ և, նա կոզնի բուժել աշխատանքում զսյություն ունեցող հիվանդազին մոմենտները, ստուգել ամեն մի կոմունիստի: Կուսակցության ամեն մի անգամ պետք և առաջնորդ հանդիսանա իր բնագավառում: Յեւ առաջին անգամ եւ յենթարկվելու դամանը և հուզմունքով, բայց առանց յերկյուղի յեւ դիմաւորելու գտումը: Հուզմունքով, վորովհետեւ յեւ պարծենում եւ այնպիսի մի կուսակցության մեջ գտնվելու համար, ինչպիսին և մեր կուսակցությունը: Առանց յերկյուղի, վորովհետեւ յեւ ինձ արժանի յեւ համարում գտնվել կուսակցության շարքերում»:

Ընկ. Կադանովիչի Մոսկվայի քաղաքային կու-



սակտիվի ժողովում արտասանած յերեկ հրապարակված ճառը, վորն սպառիչ ամբողջականությամբ տալիս ե կուսակցության գտման նշանակությունը, ներկա գտման առանձնահատկությունները և խնդիրներն ու նրա դերը կուսակցական մասսաների իդեոլոգիական մակարդակը բարձրացնելու ասպարեզում, պետք ե կազմի գտման բնագավառում մեր կատարելիք բացատրական ամբողջ աշխատանքի հիմքը: Ամեն մի կոմունիստ պետք ե ամենաուշագիւր կերպով ուսումնասիրի այդ կարեւորագույն փաստաթուղթը և զինվելով նրանով, տանի բայլէկիյան խոսքը դեպի անկուսակցական մասսաների ամենաթանձր խաւերը:

Ձտման հաջողությունը խոշոր չափով կախված ե տեղերի կազմակերպչորեն, խնամքով նախապատրաստվելուց: Այստեղ գլխավորն ե ստուգող հանձնաժողովների ընտրությունը, վորոնք հսկայական և ամենապատասխանատու աշխատանք պետք ե կատարեն: «Մեր կուսակցությունն իրեն մաքրում ե նրա համար, վոր ավելի մարտունակ դառնա, վոր սրի իրեն, վոր կուսակցական մուրճն ավելի լավ կոփի, վոր մեր ապարատն ավելի լավ աշխատի, վոր մեր տնտեսությունն ավելի լավ զարգանա, վոր չինոֆիլիությունը և բյուրոկրատիզմն ավելի արագորեն վերանան, վոր բանվորական մասսաները և գյուղացիությունն ավելի լավ ապրեն...» (ԿԱԳԱՆՈՒԷԶ): Հանձնաժողովները պետք ե ցուցաբերեն ամենախորը գործարարություն և համառություն այն արտադրության բնույթն ու պայմաններն ուսումնասիրելու գործում, վորոնց մեջ աշխատում են ստուգվող կազմակերպությունները, վորովհետեւ հանձնաժողովները միմիայն այդ հիման վրա կարող են ճիշտ մոտենալ տվյալ կազմակերպության դասակարգային մարտունակության ստուգմանը: Միևնույն ժամանակ հանձնաժողովները պետք ե ցուցաբերեն կոմիսածություն, կայունություն, զգոնություն, համբերատարություն, գործին վոչ թե ձևակերպորեն, այլ ըստ ելության մոտենալու ընդունակություն, վորովհետեւ գործը վերաբերում ե թե ամբողջ կազմակերպությանը և թե յուրաքանչյուր առանձին կոմունիստին:



Ահա թե ինչու կուսակցությունը պետք է ըստ ուղեին և զտեն կուսակցության լավագույն, ամենաանձնավեր դավալեները միայն: Այն հանգամանքը, վոր, որինակ, Մոսկովայի և Լենինգրադի մարզային շրջանային հանձնաժողովներն ուշադիր վերաբերմունք են ցուցաբերում ստուգող հանձնաժողովների անդամներ ընտրելու գործին, իրավունք և տալիս հայտարարելու, վոր Մոսկովայի ու Լենինգրադի կադմակերպությունների զտումը գտնվում և ամուր և վստահելի բայշեիկյան ձեռքերում:

Առայժմ այդպիսի վստահություն չունենք միքանի ալ կադմակերպությունների վերաբերմամբ: Առանձին շրջկոմներ և շրջանային ՎՋ-ներ (Ուրալում, Հեռավոր Արևելքում), առանց սպասելու մարզային հանձնաժողովների ցուցումներին, հապճեպորեն իրենք են ընտրում և իրենց իշխանությամբ հաստատում ստուգող հանձնաժողովներին: Դրա արդյունքը Համազանց վողրալի յե լինում: Հանձնաժողովի անդամ են ընտրվում յերբմի վոչ կայուն, վոչ կարգապահ մարդիկ (միքանի կուստույժ ունեցողները), նույնիսկ կասկածելի համբավ ունեցողները (Մարչեվսկու տրինակը Վիննիցայում):

Ստուգող հանձնաժողովների կազմի այդպիսի ընտրության զեպքում տեղտեղ գտումը կարող և կուսակցությունն ամրացնելու համար մղվող պայքարի զենքից վերածվել կուսակցության զեմ պայքարելու գործիքի: Ընկ-Ստալինի պատկերավոր արտահայտությամբ՝ գտումը բոլորին հիշեցնում և, թե կա մի տեր, վորը ժամանակ առ ժամանակ անցնում և կուսակցության շարքերի միջով և ձեռին տվել բռնած՝ ավելում, մաքրում և նրա կազմից բոլոր անպետք ու ավելորդ տարրերին:

Ստուգող հանձնաժողովները, կատարելով կուսակցության կապքը, կոչված են ամուր բռնել իրենց ձեռքում ավելը և ճիշտ նպատակին ոգտագործել այն: Անտարահույս, գտումը կատարվելու յե բայշեիկյան ծավալուն ինքնաքննադատության և ներկուսակցական զեմոկրատիայի պայմաններում, ընկերական միջնորդաում:

Զտման հանձնաժողովները, վորոնց աշխատանքն ընթանալու յե ամբողջ կուսակցության վերահսկողության

տակ, պարտավոր են ապահովել ստուգող կազմակերպու-  
թյունների աշխատանքի մանրամասն ստուգումն ու բարե-  
լավումը, պարտավոր են մաքրել կուսակցության շարքերը  
խորթ ու ներս խցկված բոլոր տարրերից, ոգնել այն մարդ-  
կանց վերադաստիարակմանը, վորոնք ընդունակ են ուղղ-  
վելու, բուն բայլեկներ դառնալու:

Ձառու՞մը բայլեկի կոր են, մտածված կերպով  
կատարելը յերաշխիք ե, վոր նա ել ավելի կամ-  
բացնի ու կհամախմբի մեր կուսակցությունն  
ու աշխատավորներին միլիոնավոր մասսաներին  
լենինյան Կենտկոմի շուրջը, մեր հաղթանակն  
ապահովող կուսակցութան ու բանվոր դասա-  
կարգի մեծ առաջնորդ ընկ. Ստալինի շուրջը:  
(«ՊՐԱՎԴԱՅԻ» ՀՈՒՆԻՍԻ 3-ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ)

## ԲԱՅԼՇԵՎԻԿՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՈՒՆԻՍՏԻ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆ Ե

Մեր կուսակցությունը միշտ ուժեղ ե յեղել իր գաղա-  
փարական կոփվածությամբ, իր անսահման նվիրվածու-  
թյամբ պրոլետարիատի գործին, անձնուրացությամբ, ան-  
հաշտությամբ ամեն տեսակ գաղափարական տատանումնե-  
րի նկատմամբ, իր շարքերի յերկաթակուռ կարգապահու-  
թյամբ: Հենց այդ հատկություններն են, վոր անխորտա-  
կելի հեղինակություն ապահովեցին մեր կուսակցությանը  
մասսաներում: Վերհիշեցե՛ք այն ընդհատակյա բայլեկի,  
պրոֆեսիոնալ հեղափոխականի փայլուն պատկերը, վորի  
մասին գրել ե Լենինը, վորն անխոնջ կերպով կազմակեր-  
պում եր բանվոր դասակարգին, հեղափոխական զիտակցու-  
թյուն եր մտցնում կապիտալի ճնշման դեմ վտաքի յեկնող  
բանվորական մասսայի մեջ:

Բայլեկիկների հին սերնդի լավագույն ներկայացու-  
ցիչների այդ հատկությունները հաղորդվել են հարյուր հա-  
զարավոր այն կուսակցականներին, վորոնք պրոլետարիա-  
տի զիտառուորայի եպոխայում մտան կուսակցության մեջ:  
Լենինի և Ստալինի ղեկավարությամբ աճեց և ամ-

բացալ մեր մեծ կուսակցությունը, ընդունելով իր մեջ բան-  
վոր դասակարգի բոլոր լավագույն առաջավոր տարրերին:

Հատկապես այդ դադափաբական ությունը աշ-  
խատանքում, նվիրված ությունը պրոլետա-  
րական հեղափոխական թաղում եր մասսաներին  
բայշխիկների հետևից՝ քաղաքացիական պատերազմի բոլոր  
նպատակներում, սոցիալիստական շինարարության բոլոր բնա-  
զավաններում:

Իսկական բայշխիկը վառվում և աշխատանքում, առանց  
խնայելու իր ուժերը, վարակելով շրջապատողներին իր խան-  
դավառությամբ և հոգուտ կոմունիզմի իր կատարած անձ-  
նուրաց աշխատանքով, ցույց տալով սոցիալիստական մրցու-  
թյան և հարվածայնության որինակ: Հեղափոխական  
տեսակետային հիմունքները և մեր պայքարի հեռանկարները  
դիտենալն ավելի կայուն, ավելի կոփված և դարձնում նվիր-  
ված կուսակցականին, դադափաբականորեն գինում հակա-  
սակերդների դեմ պայքարելու համար, տատանվողներին վրա  
ներգործելու համար:

Ահա թե ինչու կուսակցությունն իր շարքերը գտելիս  
ստուգելով յուրաքանչյուր կուսակցականի նվիրվածու-  
թյունն իր աշխատանքով, միաժամանակ աշխատում և  
բարձրացնել կոմունիստներին դադափաբական  
մակարդակը, կուսակցության ամեն մի անդամից և  
թեկնածուից պահանջում և պարզ ըմբռնել այն հիմնա-  
կան հարցերը, վերոնք վերաբերում են կուսակցության  
նպատակներին, խնդիրներին ու քաղաքականությանը:

Ընկ. Ստալինը տվեց աշխատանքի այն հատուկ  
ստիլի կլասիկ վորոշումը, վեր պետք և ունենա բայշխիկը:  
«Այդ առանձնահատկությունները յերկուս են. ա) ռուսա-  
կան հեղափոխության թափը, բ) ամերիկյան դործարարու-  
թյունը: Լենինիզմի ստիլն այդ յերկու առանձնահատկու-  
թյունների գուգակցումն և կուսակցական ու պետական աշ-  
խատանքում: Աշխատանքի հենց այդ ստիլի շնորհիվ՝ ռու-  
սական հեղափոխության թափի և ամերիկյան դործարարու-  
թյան գուգակցման շնորհիվ, «վորը խոչընդոտ չգիտե և չի  
ճանաչում, վերն իր դործարար համառությամբ տառալում  
և բոլոր և ամեն տեսակ խոչընդոտները, վորը չի կարող մին-

չէ վերջը չհասցնել սկսված գործը», — հենց դրա շնորհիվ մենք մեծագույն հաղթանակներ ձեռք բերինք առաջին հընգամյակում:

Յեւ այժմ, յերկրորդ հնգամյակում, սոցիալիստական ինդուստրիայի ճակատում կան հսկայական թվով աշխատանքի ենտուզիաստներ՝ սկսած իսկական հարվածային հերոսներից մինչև գործարանների, տրեստների ու միավորումների գերեկտորները, վսրոնց համար բոլոր շահերից բարձր և պատվով կատարել կուսակցութեան կողմից նրանց հանձնված գործը: Նրանք լենինաբար աշխատում և պայքարում են Խորհուրդների յերկրի տնտեսական անկախությունն ամրացնելու և դրանով իսկ միջազգային հեղափոխութեան ճակատն ուժեղացնելու համար:

Սակայն կուսակցութեանը նվիրված այդ տնտեսավարների հետ միասին<sup>ա</sup> կան նաև միջանի կոմունիստ տնտեսավարներ, վորոնք մոռացել են իրենց հեղափոխական պարտականությունը, ընկել են բուրժուական մասնազետների ազդեցութեան տակ և սկսել են դանդաղեցնել պետական պլանների ու առաջադրանքների կատարումը: Նրանք միայն ձևի համար են ընդունում պլանը, վորովհետև հարմար չէ հրաժարվել դրանից (մթթե կգտնվի նրանց մեջ այնպիսի մի հիմար, վորն այժմ բացահայտորեն հրաժարվի—չե՞ վոր նրան իսկույն կմերկացնեն վորպես ոպորտունիստի): Նրանք ձևի համար կընդունեն պլանը, վորպեսզի հետո գործով վիժեցնեն և չարամտորեն քմծիծաղ տան, շաղակրատեն նրա «վոչ իրական» և «անիրագործելի» լինելու մասին:

Հենց այդպիսի ոպորտունիստները, յերկերեսանիները, կուսակցական և պետական կարգապահությունը խախտողներն են, վոր սկսել են սաքստաժի յենթարկել Կենտկոմի ու Ժողկոմխորհի ապրիլի 8-ի Դոնբասին վերաբերյալ կարեւորագույն վորոշման կենսագործումը, աշխատելով պահպանել ածխարդյունաբերությունը դեկավարելու բյուրոկրատիկ, գրասենեկային մեթոդները: Կուսակցությունը կշախշախի, իհարկե, նրանց դիմադրությունը, առանց թուլացնելու իր պայքարը բոլոր նրանց դեմ, վորոնցից սաքստաժի «հոտ և գալիս»:

Սակայն ինչի՞վ բացատրել այդպիսի դիմադրութեան



A  $\frac{\pi}{41595}$

փաստը, յեթե մոչ նրանով, մոր այդ մարդկանց չի վառում, չի մոզեորում, առաջ չի շարժում մեր զաղափարները, կոմունիստիկ գաղափարները կենսաբեր, հզոր ուժը, մոր նրանց սիրաբ կրծում և «տարակույսի մորդը»։ Իսկ քանի մոր այդ այդպես և, ապա այդպիսի «կոմունիստները» աշխատանքից շատ բան չի դուրս գա, ոգուս չի լինի պրոլետարական պետությունը։

Աշխատանքում գաղափարականություն չլինելու բաժնականաչափ արտաշայտություն կարելի չե գտնել նաև գյուղում։ Այնտեղ ևս մենք ունենք այնպիսի կուսակցականներ, մորոնք իրենց թեկերը քշած, բայլելիկորեն կազմակերպում են նոր, կոլտնտեսական գյուղը, արմատացնում են այնտեղ պրոլետարիատի գաղափարները, անձնվիրաբար աշխատում են գյուղը սոցիալիստական վերափոխման յինթարկելու, գյուղացիներին ու կոլտնտեսականներին վերագատարակելու համար։ Սակայն միաժամանակ պետք և ստեղծ, մոր գյուղի կոմունիստների զգալի մասը դեռ յենթակա չե մանր-սեփականատիրական իդեոլոգիային, մանր բուրժուական ադդեցություններին։ Յեղ այդ պատճառով, մի շարք գյուղերում ու շրջաններում, մորտեղ յեռում և դատակարգային սուր պայքարը, միքանի կոմունիստներ և նույնիսկ ամբողջ բջիջներ ուղղակի գերի յեն ընկնում կուլակին, միաժուլում են նրա հետ։

Դատակարգային պայքարն առանձնապես սրվելու պահին (յանքը, հացամթերումները և այլն) այստեղ յերեան են գալիս դրսանում կուստումս ունեցող շատ խարդախներ, մինչև ուղն ու ծուծը նեխված տարրեր (բավական և, յեթե վերհիշենք թեկուղ Հյուսիսային Կովկասի գյուղական մի շարք կազմակերպությունները)։

Մեծ ու պատասխանատու չե կոմունիստի գերը, մորպես մասսաների գաղափարական ղեկավարի ու առաջնորդի։ Դեկավարը պետք և զնա մասսաների առաջից, նրանցից հեռու, նրանցից լավ տեսնի, նրանցից շատ, նրանցից լավ դիտենա։ Մենչեիկներից, «պոչականություն» այդ քարոզչաներից, բայլելիկները տարբերվում են նաև նրանով, մոր քարշ չեն գալիս մասսաների պոչից, այլ իրենց հետ են տանում նրանց։ Բուն բայլելիկին բնորոշում և մոչ թե եժանա-



դին ժողովրդականութեան հետամուտ լինելը, վոչ թե հասարակութեանը դուր գալու ցանկությունը, վոչ թե հետամնացութեան տրամադրություններին մենշեկաբար ձայնակցելը: Բայլ լեկել պետք է հոսանքի դեմ գնա, կարողանա հակառակ գործողութեան ձեռնարկել, յերբ այդ պահանջում են հանգամանքները:

Այժմ բայլ լեկին ստուգվում է գործնական աշխատանքով: «Այժմ կուսակցութեան անդամի անձնուրացությունը, նվիրվածությունը և կարգապահությունն ստուգվում է վոչ թե նրա ընդհանուր «սկզբունքային» համաձայնութեամբ՝ կուսակցութեան հիմնական գծին, այլ այն կոնկրետ պայքարով, վորը մղում է նա զլիսավոր գծի նյութական բովանդակութեան համար, սոցիալիստական շինարարութեան սլանների իրականացման համար» (ԿԱԳԱՆՈՎԻԶ):

Կուսակցութեան զտումը շորդ հնգամյակի պայմաններում, յերբ կուսակցութեան առաջ ծառացած են նոր, բարդ խնդիրներ, կլինի մեր շարքերի կոփվածութեան ու համախմբվածութեան մի նոր ստուգում: Զտումը մեր յերկրի, ամբողջ աշխարհի սլրոլետարներին, վորոնք մեր կուսակցությունը համարում են իրենց հարազատ կուսակցությունը, մի անգամ ևս ցույց կտա, վոր նրա սողսպատակու շարքերում գտնվում են տասնյակ և հարյուր հազարավոր անընկճելի հեղափոխականներ, կոմունիզմի գործի համար պայքարող անձնուրաց մարտիկներ:

Միևնույն ժամանակ զտումը յերևան կբերի, կմերկացնի և կազատի կուսակցությունը դասակարգայնորեն խորթ, թշնամի բոլոր տարրերից, յերկերեսանիններից, կուսակցութեան և պետութեան յերկաթե կախապահությունը բացահայտորեն ու գաղտնի խախտողներից, ալյասերվածներից, կարիերիստներից, մորթապաշտներից, բյուրոկրատներից, բարոյապես քայքայված բոլոր տարրերից, կուսակցութեան դրոշն արատալորողներին:


Նոր պայմաններում, յերբ սոցիալիզմը հաղթանակեց ամբողջ գծով, յերբ մենք վերջնականապես ջախջախում ենք կուլակութեան մնացորդները, և նրանք, մեռնող դասակարգի այդ մնացորդները, տեսնելով իրենց կործանումը, կատաղի դիմադրություն են ցույց տալիս մեր գործին,—այժմ

ապիկի, քան յերբեքե, մեզ գաղափարականությունն և  
պետք աշխատանքում, մեզ հարկավոր են կայուն  
բայշնիկներ, առանձնատուկ նյութից կերտված, ասես  
դուռ պողպատից ձուլված մարդիկ: Յեզ մայրաքի գաղա-  
փարական կոմունիստը պետք և զնա մասսաների առաջից,  
պետք և վարի ուղղակի ու շեշտակի ճշմարտու-  
թյան քաղաքականություն, լինի անհաշտ դա-  
սակարգային թշնամու և նրա դործակալության հանդեպ:  
Կուսակցությունը, վորպես ինքն իշխան տեր,  
պահանջում և իր շարքերում գտնվող բոլոր  
անձերից՝ ազնվություն, ճշմարտություն, գա-  
ղափարականություն, անձնվիրություն, յե-  
րկաթե կարգապահություն, պահանջում և ան-  
պայման դիտանալ ըստ և յության իր արտա-  
դրական աշխատանքը, պահանջում և, վոր ամեն  
մի անդամն իրականացնի հստակ սկզբուն-  
քային դիժ՝ իրեն հանձնված բնագավառում:

Կուսակցության այն անդամը, վորը վհատության  
միջև ընկնում, վորը ցուցաբերում և յնանդի թուլացում  
այն ամենալարված պայքարում, վորը մղվում և կոմունիզ-  
մի կառուցման մեր մեծ եզրխայում, այդպիսի կոմունիստը,  
այդպիսի «հեղափոխականը» կոչելի հարժե: «Մեզ հարկա-  
վոր չեն հիտաերիկ բոնկուճներ: Մեզ հարկավոր և պրոլե-  
տարիատի յերկաթակուռ բատալյոնների համաչափ առա-  
ջընթացը», — սովորեցրել և իենինը կուսակցությանը:  
Յեզ նրանք, այդ բատալյոնները, կընթանան զեպի նորա-  
նոր մարտեր, նորանոր հաղթանակներ՝ զեկավարությամբ  
իննյան կուսակցության և նրա առաջնորդ ընկ. Ստա-  
լինի:

Այդ բատալյոններն իրավունք ունեն  
հաբրտանալու այն բանով, վոր նրանց վիճակ-  
վել և վճռական մարտեր մղել հոյակապ, դա-  
ման և պոխայում, մարտեր մղել պրոլետարա-  
կան մեծագույն առաջնորդի, Մարքսի և Լե-  
նինի դործը շարունակողի անմիջական զեկա-  
վարությամբ, մի դործ, վորն արգեն անդառ-

նալիորեն նվաճել է յերկրագնդի մեկ վեցե-  
րորդ մասը և վորն անխուսափելիորեն նվաճե-  
լու յե ամբողջ աշխարհը:  
(«ՊՐԱՎԴԱՅԻ» ՀՈՒՆԻՍԻ Ց-Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՂԸ):



Մշակույթի Լ. Արմյան

Համահման է տարադրության 2 հուլիսի 1933 թ.

Մտարգրված է տպագրելու 5 հուլիսի 1933 թ.

Հրատ. № 119. Տիրած 500. Գլավիտ 7753 (թ)

Գուտբրատի տպարան. Պատվեր № 7. 44,000 տպ. թ.

ԳԱՍ Հիմնարար գիտ. գրադ.



220041525



(066-)

ԳԻՆԸ 25 ԿՈՊ.

A  $\frac{11}{41525}$



Чистка партии началась

Партиздат 1933 Эривань